

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր, ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագրքի մասին դասախոսությամբ հանդես եկավ ֆրանսիացի հայտնի հայագետ Ժան-Պիեռ Մահեն:

Դասախոսությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև Կ. Պոլսի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը, Մայր Աթոռի միաբանները, Արարատյան թեմի հոգևորականաց դասը, ճեմարանի ուսանողությունը և հայրենի մտավորականներ:

Հանդիպմանը բացման խոսք ասաց Վեհափառ Հայրապետը՝ նշելով ֆրանսիացի հայագետի գրական-բանասիրական բեղուն գործունեությունը, նրա առ հայն տածած ջերմ զգացումներն ու այն յայնատարած հարգանքը, որ հայ ժողովուրդը ունի դեպի իր հոգևոր արժեքների անձանձրույթ ուսումնասիրողը:

Ապա «Մատյանի» խորհրդաստ մեկնաբանությամբ ելույթ ունեցավ Ժան-Պիեռ Մահեն: Նա դահլիճին ներկայացրեց Գ. Նարեկացու աղոթագրքի իր ընկալումներն ու դատողությունները, որոնք մեծ հետաքրքրությամբ ունկնդրվեցին ներկաների կողմից:

Դասախոսության ավարտին հարգելի բանախոսը պատասխանեց թեմային առնչվող մի քանի հարցերի:

* * *

Հոկտեմբերի 3-ին, ուրբաթ.—Այսօր, առավոտյան, Կ. Պոլսի Ամենապատիվ Պատրիարք Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը, հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին ու Մայր Աթոռի միաբաններին, մեկնեց իր պաշտոնատեղին՝ Կ. Պոլիս:

* * *

Հոկտեմբերի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպ. Պոլատյանը:

«Հայր մեր»-ից առաջ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը Ավագ խորանից ընթերցեց Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ պատարագիչ սրբազանին արքության պատիվ շնորհելու մա-

Մայր Աթոռ Էջմիածնի 1986 վերջերին
(11 դեկտեմբերի 1986 թ.)

սին: Որից հետո իմաստալից քարոզ խոսեց գերաշնորհ Տ. Ներսես արքեպ. Պոլսպալյանը (տես էջ 41):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 11-ին, շաբաթ.—Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ մատուցեց վանքի վանահայր Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբանները, ինչպես նաև բազմաթիվ ուխտավորներ:

*
* *

Հոկտեմբերի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ և Հունաստանի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպս. Գալֆաքյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ սրբազանը (տես էջ 44):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը:

Հավարտ ս. պատարագի քարոզ խոսեց Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը (տես էջ 39):

Այնուհետև կատարվեցին «Խաղաղական» հոգեպարար աղոթքներ՝ աշխարհի խաղաղության համար:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 26-ին, կիրակի.—Գիւտ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը:

«Հայր մեր»-ից առաջ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ ուղղված Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությանը:

Ս. պատարագին իրենց մասնակցությունը բերեցին Մելքոնյան կրթօջախի քառաձայն երգչախումբը՝ խմբավարությամբ տիար Սեպուհ Աբգարյանի:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: Ներկա էր նաև Մելքոնյան վարժարանի տնօրենուհի Ագապի Նասիբյանը:

*
* *

Հոկտեմբերի 29-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի ժամանակ Վեհափառ Հայրապետը Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանին հայտարարեց Մայր տաճարի փոխլուսարարապետ:

*
* *

Նոյեմբերի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Պարգև աբեղա Մարտիրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, ստէր աղաչեսցուք» (ժամագիրք) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նոյեմբերի 8-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 19.20-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում «Սինդեսմոս» կազմակերպության փոխնախագահ Ս. Պ. Ռասկաչովսկին և Գործադիր կոմիտեի անդամ

հայր Վենեդիկտոսը հանդիպում ունեցան ճեմարանի ուսանողության հետ:

Հյուրերը պատմեցին «Սինդեսմոս» կապակերպության գործունեության մասին:

Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում:

*
* *

Նոյեմբերի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

«Հայր մեր»-ից առաջ Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը՝ պատարագիչ սրբազանի 30-ամյա քահանայական գործունեության առիթով (տես էջ 8):

Ապա Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը երախտագիտության խոսք ասաց Վեհափառ Հայրապետին:

*
* *

Նոյեմբերի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նոյեմբերի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մաշտոց աբեղա Խաչիկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ճանապարհք բարեպաշտաց ուղիղք են՝ դիւրեալք և պատրաստեալք են ճանապարհք Աստուածպաշտից» (Եսայի ԻԵ 17) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 23-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Շիրակի թեմի առաջնորդ գեղաշնորհ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ Ավագ խորանից քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 5):

«Կոմիտասյան պատարագի» բարձրարվեստ կատարմամբ հանդես եկավ Լենինականի Ս. Աստվածածնի Յոթ վերք եկեղեցու երգչախումբը (ղեկավար՝ Արամ Պապյան):

*
* *

Նոյեմբերի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նոյեմբերի 29-ին, շաբաթ.—Տօն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը:

*
* *

Նոյեմբերի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը և պատարագի վերջում հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ «Սիաւասիկ ես ածից ի վերայ ձեր շունչ կենդանի. Եւ տաց ի ձեզ ջիղս, եւ ածից ի վերայ ձեր մարմինս, եւ ձգեցից ի վերայ ձեր մորթ, եւ տաց կոգի իմ ի ձեզ, եւ լինիջիք կենդանի, եւ ծանիջիք թէ ես եմ Տէր» (Եզեկ. ԼԷ 5—6) բնաբանով՝ անդրադառնալով հայ ժողովրդի պատմական անցյալին, օտար իշխանությունների՝ Հայաստանը նվաճելու անընդհատական նկրտումներին, հայության հերոսական մաքառումներին, քսաներորդ դարասկզբում հայ ժողովրդի ապրած մեծագույն ողբերգության, ապա և Նոյեմբեր 29-ով ժառանգած Խորհրդային Հայաստանի պայծառ ներկային:

Ս. պատարագի ավարտին սովետական կարգերի հաստատման 66-րդ տարեդարձի առթիվ կատարվեց Կառավարական մաղթանք:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 7-ին, կիրակի.—Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եւ որ ոք գայթակղեցուցէ զմի ի փոքրկանցս յայսցանէ՝ յիս հաւատացելոց՝ լաւ է նմա եթէ կախիցի երկան իշոյ



Վեհափառ Հայրապետը, Ներսիսյան 2ջջատարտի Մայր Հարանիքի սիմնական ջաղբարանքում
իսկզբանական նամուսնիկ Լուսաժեռանի կրկնակերում

ընդ պարանոց նորա, եւ ընկղմիցի ի խորս ծովու» (Մատթ. ԺԸ 6) բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 14-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Պսակ աբեղա Կարապետյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Փութացիր անձն իմ, փախչիլ ի չարեաց. փափաքիլ բարեաց: Քեզ միշտ մերձ ծանիր. քուն մահու եկեալ. քնոող դատաւոր» (Ժամագիրք) բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Քրիստոսի հրաշագործությանը և քարոզչությանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի հովանավորությամբ, տեղի ունեցավ գրական երեկո, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը: Երեկոյին հայ միջնադարյան և ժամանակակից բանաստեղծների ստեղծագործությունների արտասանությամբ հանդես եկավ Երևանի դրամատիկական թատրոնի դերասան և ասմունքող Ամիրատ Գալուստյանը: Շնորհալի ասմունքողի յուրաքանչյուր կատարում ընդունվում էր բուռն ծափահարություններով:

*
* *

Դեկտեմբերի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ամենայնի որ ունիցի՝ տացի. եւ յայնմանէ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ» (Ղուկ. ԺԹ 26) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: